ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սպիտակ

30 /05/2025

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Արկադի Ասատրյանը, Վաչիկ Գրիգորյանը, Կարինե Դիլաքյանը, Նունե Էիտիբարյանը, Վարդուհի Թումանյանը, Զալիկո Համբարյանը, Վահե Ղազարյանը, Համլետ Մազմանյանը, Գևորգ Մարգարյանը, Գագիկ Սահակյանը, Արամայիս Փիլոյանը, Գուրգեն Փիլոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արտակ Մաթոսյան, Ազգանուշ Ֆրանգյան, Երեմ Գրիգորյան, Գոռ Աշուղաթոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Քաջայր Նիկողոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ազգանուշ Ֆրանգյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1 . Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 30-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի թիվ 13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

3) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներն օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 62)*

ԼՍԵՑԻՆ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություն՝ ավելացնել աղբատար ավտոմեքենա՝ ԿՕ-449-41 շասի ՄԱՅ-438121-540-001 մակնիշի, X5H44941PS0000064 նույնականացման համարով:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 63)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 13-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող MERCEDES-BENZ 600L մակնիշի ավտոմեքենան օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 13-Ա որոշումը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 64)*

ԼՍԵՑԻՆ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրած գնահատման եզրակացությունները՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցները դասական աճուրդով օտարելուն՝ համաձայն հավելվածի:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 65)*

Ավագանու անդամներ

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ԱՐԱ ՄԱՏԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ազգանուշ Ֆրանգյանը